<<ԱՄԱՍԻԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ
ԶԱՐԳԱՑՄԱՆ 5-ԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

<<Ամասիայի առողջության կենտրոն>> Փակ Բաժնետիրական Ընկերությունը ստեղծվել է Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 07.12.1996թ. գրանցված պետական գրանցման վկայական է 01 Ա030210 << ԱՄԱՍԻԱՅԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>> փակ բաժնետիրական ընկերությունը և Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 07.12.1996թ գրանցված, պետական գրանցման վկայական 01 Ա030211 <<ԱՄԱՍԻԱՅԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի թիվ 1416-Ն որոշման համաձայն միաձուլման միջոցով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրանց իրավահաջորդը փոխանցման ակտերին համապատասխան:

Ընկերությունը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի հյուսիս-արևմուտքում՝ լեռնային գոտում, գ. Ամասիա փողոց 2 թիվ 19 հասցեում:

Ընկերությունը հանդիսանում է 100% պետական բաժնեմաս ունեցող ՓԲԸ, որի կազմում ընդգրկված են 16 բուժամանկաբարձական կետեր, սպասարկում է 5կմ - 36կմ հեռավորությամբ 23 գյուղական համայնքներ, այդ թվում նաև սահմանամերձ 5 համայնքներ, 6124 բնակչության թվաքանակով:

Ընկերությունը համաձայն 28 մարտի 2008թ. Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության կողմից տրված լիցենզիայի և չափորոշիչների իրականացնում է պետության կողմից երաշխավորված ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հետևյալ արտահիվանդանոցային անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն ու սպասարկում

- Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ
- Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ
- Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ
- Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ
- Շտապ բժշկական օգնության ծառայություններ
- Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ
- Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ
- «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրում ընդգրկված առողջապահական փաթեթի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրում
- Ոչ վարակիչ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ծառայություն

Իրականացնում է նաև վճարովի ծառայություններ՝

- բժշկական
- այլ՝ վարձակալություն

Ընկերության հիմնական առաքելությունն է համարվում **շարունակաբար** բնակչության ներկա առողջական վիճակի բարելավմանն ուղղված բուժծառայությունների որակի, մատչելիության և հասանելիության բարձրացումը:

Հաշվի առնելով որ առկա է ոչ վարակիչ հիվանդությունների, մասնավորապես սիրտանոթային համակարգի, շաքարային դիաբետի, չարորակ նորագոյացությունների և քրոնիկական շնչառական հիվանդությունների տարածվածության աճի միտում, և այս առումով առավել ռիսկային խմբում են հայտնվում հատկապես բնակչության աղքատ և սոցիալապես անապահով խմբերը, և կարևորելով նշված հիվանդությունների և ռիսկերի վերաբերյալ բնակչության առողջ ապրելակերպի, հիվանդությունների կանխարգելման, վաղ դիմելիության անհրաժեշտության հարցերի շուրջ ցածր տեղեկացվածությունը, ինչպես նաև Ամասիայի տարածաշրջանի առանձնահատկությունները՝ մինչհամայնքային հեռավորությունները, բնակչության ծերացումը և այլ ցուցանիշները, ապա **2017-2022թթ.** ռազմավարությունը ներառում է հետևյալ հիմնական ուղղվածությունները՝

- արտահիվանդանոցային-ամբուլատոր-պոլիկլինիկական և շտապ օգնության ծառայությունների որակի բարելավում, մասնավորապես համաչափ հասանելիության ապահովում ինչպես Ամասիայի, այնպես էլ տարածաշրջանի գյուղական համայնքների, հատկապես հեռավոր, սահմանամերձ և լեռնային համայնքներում բնակվող ազգաբնակչության համար,
- հիվանդությունների վաղ հայտնաբերում և բարդությունների կանխարգելում

Այդ նպատակով, հատկապես գյուղական բնակավայրերում հանրության առողջապահական կրթման իրականացման խնդրում, պլանավորվում է օգտագործել նաև հասարակական կազմակերպությունների հնարավորությունները:

Կարևորելով Ամասիայի տարածաշրջանի առանձնահատկությունները՝ մինչհամայնքային հեռավորությունները, մինչհամայնքային տրանսպորտի բացակայությունը, վեց ամիս ձմեռային պայմաններում հիմնական կապող ճանապարհների դժվարանցանելիությունը և այլ ցուցանիշները, ինչպես նաև հետագա տարիների ընթացքում սոցիալ-տնտեսական զարգացման մեջ առողջապահության ոլորտի զարգացման առաջընթաց ձևավորելու՝ առողջապահական ծառայությունների մատչելիության և հասանելիության ու որակի համաչափ բարձրացման համար հիմնական շեշտը դրվում է անկախ կազմակերպությունից արտաքին միջավայր գործոնի ազդեցությանը, որն էլ լուրջ խնդիր ու խոչընդոտ է հանդիսանում կազմակերպության գործունեությանը՝ բուժօգնության և սպասարկման կազմակերպմանը: Հաշվի առնելով վերոհիշյալը, ինչպես նաև բուժհաստատության և մատուցվող ծառայությունների առումով այլընտրանք չունենալու հանգամանքը, անհրաժեշտություն է առաջացել և **2017-2020թթ.** ակնկալվում է մատուցվող ծառայությունների գների /ներառելով պահպանման ծախսերը/ վերանայում, և գյուղական բուժհաստատությունների համար առանձնահատուկ, տարբերակված չափորոշիչների մշակում ՀՀ ԱՆ կողմից, համապատասխան համայնքի ղեկավարների կողմից **2017-2022թթ.** համապատասխան ֆինանսի առկայության դեպքում միջհամայնքային ճանապահների վերանորոգում և հատկապես միջհամայնքային տրանսպորտային միջոցների ապահովում:

Հատուկ կարևորելով մոր և մանկան առողջության պահպանման և շտապ օգնության ծառայությունների արդիականացումը, ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման ուղղված միջոցառումները, տարեցտարի առավել տարածված ոչ վարակիչ հիվանդություններից

մահացության ցուցանիշների կրճատումը, նախատեսվում է **2017-2022թթ.** համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում առողջապահության ոլորտում համակարգի կառավարմանն ուղղված բարեփոխումների իրականացում, միջոցառումների հստակ մեխանիզմների ներդրում, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների պատշաճ մակարդակով կազմակերպման համար ՀՀ պետ բյուջեի միջոցների հաշվին կենտրոնացված կարգով և դոնոր կազմակերպությունների կողմից անհրաժեշտ ժամանակակից որոշ բուժ սարքավորումների ձեռք բերում:

Շտապ բուժօգնության ծառայության բարելավմանը կնպաստի նաև ՀՀ ԱՆ-ի կողմից **2017-2022թթ.** ակնկալվող ծառայության նոր ֆինանսավորման մեխանիզմների ներդրումը՝ գործակ-ցի կիրառմամբ /հաշվի առնելով միջհամայնքային հեռավորությունը և ճանապարհների վիճակը/, բարձրորակ բժշկական կադրերի ապահովումը՝ պարբերաբար, շարունակական վերապատրաստման դասընթացների իրականացմամբ:

Առաջնային բուժօգնության զարգացումը կխթանի դիմողների, հիվանդությունների վաղ ախտորոշվելու, ամբուլատոր բուժօգնության ծավալների ավելացմանը, որը կկրճատի ստացիոնար պայմաններում բուժվող հիվանդների քանակը և կնպաստի առողջապահության համակարգի ֆինանսական միջոցների խնայողությանը:

Քանի որ <<Ամասիայի Առողջության կենտրոն>> ՓԲԸ-ն սպասարկում է գյուղական ազգաբնակչության, ուստի բնակչության բժշկական օգնությունն և սպասարկումն իրականացվում է բացառապես անվճար, ուստի ֆինանսավորումն իրականացվում է պետ պատվերի բյուջեի կողմից: Վերջին մի քանի տարիների ընթացքում պետ պատվերի գների փոփոխություն չի կատարվել, սակայն այդ ընթացքում բարձրացել են նվազագույն աշխատավարձը 10%, դեղորայքի գները 9.1% և այլն, արդյունքում ստացվել է, որ եկամուտների գումարը մնացել է նույնը, իսկ ծախսերինը՝ ավելացել է 18%-ով, ուստի ընկերության շահույթը չնվազելու համար կատարվել է ծախսերի խնայողություն՝ օրինակ գազի, տնտեսական, գրենական և այլ ծախսերի, աշխատավարձի ֆոնդի չբարձրացման համար դրույքաչափի կրճատում: Եթե կատարվեին իրականում անհրաժեշտ ծախսերը ամբողջությամբ, ապա շահույթը կնվազեր:

Շտապ օգնության ծառայությունը ևս աշխատել է ծախսերի խնայողությամբ, մասնավորապես հաստիքների, աշխատավարձի ֆոնդի կրճատման հաշվին, քանի որ կրկին գյուղական վայրերի, կախված տարածաշրջանի մի շարք առանձնահատկություններից, ծառայության և ֆինանսավորման չափորոշիչների տարբերակում չկա:

Նախորդ 2016թ. տրամադրվել է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալների տարեկան բյուջե 73112.2 հազ. դրամ, սակայն ըստ հետևյալ հոդվածների կատարվել է թերակատարում 5237.5 հազ.դրամի չափով՝

- լեռնային բնակավայրում աշխատող տեղամասային թերապևտին, ընտանեկան բժշկին կցագրված բնակչության
- մանկաբարձ-գինեկոլոգի կողմից իրականացվող բուժօգնություն, հղիների նախածննդյան և հետծննդյան հսկողություն
- ընտանեկան բժշկի կողմից նեղ մասնագիտացված կոնսուլտացիաների ուղեգրում՝ մեծահասակ և մանկական բնակչության

- լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ
- անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրում

Թերակատարման պատճառ են հանդիսանում մի շարք հանգամանքներ՝ համապատասխան մասնագետների բացակայությունը, անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրումը Գյումրիում գտնվող դեղատներից համաձայն պայմանագրերի /զեղչով դեղորայքից հիվանդները հրաժարվում են/: **2018-2019թթ.** ակնկալվում է տեղում դեղատան առկայություն, և որի միջոցով համապատասխան Գնումների մասին օրենքի տեղում զեղչով դեղորայքի տրամադրում հիվանդներին, **2018-2022թթ.** համապատասխան մասնագետների ապահովում:

Բացի թերակատարումից ընկերությունը «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրում ընդգրկված առողջապահական փաթեթի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների սոցիալական փաթեթով աշխատողների գծով ունեցել է գերակատարում 840,0 հազ.դրամ և արդյունքում տվյալ ծառայությունով կատարվել է անարդյունք ծախսեր, եկամուտների նվազում: Այդ պատճառով **այսուհետև, 2017թ-ից** համապատասխան ժամանակացույցեր են կազմվել վերոնշյալ ծրագրով ծառայության իրականացման ավարտում մինչև տարեվերջյան բյուջեի փոփոխությունը:

Չնայած, որ ընկերությունը տարիների ընթացքում մարել է կուտակված կրեդիտորական պարտքերը, մշտապես աշխատել է շահույթով, և տարիների ընթացքում ձեռնարկված միջոցառումների՝ հիմնականում ծախսերի խնայողության և եկամուտների՝ պետ պատվերի կատարողականի ավելացման հաշվին շահույթաբերությունը աճել 25.3%-ով:

2017-2022թթ. ֆինանսական միջոցների ուղղվածությունը կլինի առավել կարևոր հարցերի լուծմանը, որոնք ուղիղ կախված են ֆինանսական դրության բարելավման հետ,մասնավորապես գյուղերի ԲՄԿ-ներում էլեկտրաէներգիայի ապահովվում, ԲՄԿ-ների շենքերի սեփականության վկայականների համար համապատասխան գործընթացի իրականացում:

Ընկերության **2017-2022թթ.** զարգացման ծրագիրն ամբողջական ծավալով իրականացնելու հարցը հիմնականում կախված կլինի համայնքի և բուժհաստատության առաջիկա հինգ տարիների բյուջեներում նախատեսվող մուտքերի փաստացի կատարման մակարդակից, ինչպես նաև դրանց խնայողաբար ու արդյունավետ ծախսումից:

Արդյունքում ընկերության հիմնական նպատակն է ֆինանսական հոսքերի ավելացմամբ և ծախսերի նվազեցմամբ ստանալ առավելագույն շահույթ :

<<ԱՄԱՍԻԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ
տնօրեն՝ Աննա Մկոյան

10. 07. 2017թ